ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 235-Ա **06 մայիսի 2025 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՊԱՐՏԱՃԱՆԱՉ ԶԻՆՎՈՐ-2025» ԽՈՐԱԳՐՈՎ ՇԱՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ի մասի, 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում 12-րդ դասարանի արական սեռի աշակերտների միջև 2025 թվականի մայիսի 8-19-ն անցկացնել «Պարտաճանաչ զինվոր-2025» խորագրով շարադրության մրցույթ:

2 . Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում «Պարտաճանաչ զինվոր-2025» խորագրով շարադրության մրցույթն անցկացնող և ամփոփող կազմկոմիտեի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝

անցկացնել մրցույթը և լավագույն մեկ շարադրություն ներկայացնել հանձնաժողովին:

4. Կազմկոմիտեին (նախագահ Կ. Զազյան)՝ մրցույթի արդյունքների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն:

5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մարինե Գյարզոյանին՝ մրցույթի անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման առաքումը հանրակրթական դպրոցներ:

06.05.2025

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ՄԱՐԶՊԵՏ՝
Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք.Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2025 թ. մայիսի 6 -ի
N 235-Ա որոշման

Կազմ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում «Պարտաճանաչ զինվոր-2025» խորագրով շարադրության մրցույթն անցկացնող և ամփոփող կազմկոմիտեի

Զազյան Կարեն - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Շահբազյան Հասմիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Զքոյան Արփիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Լալազարյան Գայանե - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Ստորագրող
ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ
7702860120

2025-05-06 10:10:42 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՍՐՄԻՆ 08428824

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ
ՓԱԽԱՐԻՆՈՂ՝

ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ